



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Հ Ս Խ Հ
Ա Ռ Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ



613

Հ-42

ԲԺ. ՀԵՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՄՍՈՒՐՆԵՔԻ ԴԵՐԸ
ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ
Գ Ո Ր Ծ Ո Ւ Մ

ԱՌԺՈՂԿՈՄԱՏ * 1932 * ՅԵՐԵՎԱՆ

11.06.2013

20 JUL 2010 1 MAR 2010

№ 19 Ս.Ս.Ն.Լ.ՈՒՍ ԳՐԵԳՈՐԱՆ № 19

ԲԺ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ ՍՈՖԻԱ

613

Σ-42

ւլ

2050

ՄՍՈՒՐՆԵՐԻ ԴԵՐԸ
ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԳՈՐԾՈՒՄ

ԱՌԺՈՂԿՈՍ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՍՍՀՐԱՍԻԱ



ՅԵՐԵՎԱՆ

Մ. Ա. ՄԱՍՈՒՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1981

14917-57

2069

Պետերբուրգի տպարան
Ֆլավիխտ 6935 (P)
Պատվեր 5253
Տրրած 4000

ՄՍՈՒՐԻ ԴԵՐԸ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՈՒՄ

Մտերը Մայրության և Մանկության Պահպանության բաց տխլի հիմնարկներից մեկն է:

Նախկին Ռուսաստանում մտերներ գոյություն ունեյին միայն քաղաքների խոշոր արդյունարերական վայրերում, ուր ողտադորովում էր մեծ թվով կանանց ուժը:

Թվով շատ էյին սեղոնային մտերները գյուղերում սոմտուլա ամխաներին: Վերջիններս թեև բացվում էյին մեծ թվով, սակայն նրանք ընդհանուր տոմամբ անկադմակերպ էյին, չունեյին համապատասխան կադրերը, կայուն բյուջե և այդ պատճառով էլ արդյունքներն աննկատելի էյին, չնայած վոր կադմակերպող հասարակական մարմինները մտերներին մեծ նշանակություն էյին տալիս գյուղի կենցաղի վերակառուցման հարցերում: Այն ժամանակի մտերները սպասարկում էյին մեծ հասակի յերեխաներին, գլխավորապես աննպաստանների դեր էյին խաղում:

Յերեխաները հավաքվում էյին ճաշի ժամերին և կշտանարուց հետո հաճախ փախչում էյին տները:

Կնոջ մասնակցությունն արտադրության մեջ, այսինքն՝ աշխատանքը տնից դուրս, ստիպում էր հաճախ նորածին յերեխային կերակրել արհեստական կերակրով: Անժամանակ յերեխային կրծքից կտրելը և մոր

խնամքի բացակայութիւնը բարձրացնում եր յերեխաների մահացութիւնը մինչեւ 1 տարեկան հասակը: Այդ խի տեսակետից գործարաններին կից մսուրներէ կաղմակերպումն անհրաժեշտ եր, սակայն հեղափոխութիւնից հետո միայն աշխատավոր մայրերի համար հնարավորութիւնն ե ստեղծվում աշխատել, առանց վնաս հասցնելու յերեխաներին:

Հայաստանում արդունարեւության բանվորներէ յերեխաների համար 1-ին մսուրը կաղմակերպված ե 1927 թվում Լենտեքստիլի Կոմբինատին կից:

Մսուրների անումը Խ. Ս. Հ. Մ.

	1916 p.	1921-22p.	1925p.	1926p.
Ամառային մսուրներ	500	46	2164	4052
Քաղաքի մսուրներ	14	93	778	864

Մսուրների անումը Հ. Խ. Ս. Հ.

	1926 p.	1927 p.	1928 p.	1929 p.	1930 p.
Ամառային մսուրներ	—	2	10	20	43
Քաղաքի մսուրներ	1	2	4	5	8

Ինչպես տեսնում եք, մսուրների թիվը տարեց-տարի բավական մեծ աճում ե ցույց տալիս, սակայն պետք ե շեշտել, վոր համեմատած մեր յերկրի ինդուստրիալիզացման, ինչպես ե կանանց արտադրության մեջ ընդգրկման աճման, մսուրների մահճակալների քանակն այնքան ել բավարար չե:

Վիճակագրական սվյալները ցույց են տալիս, վոր 1923—1927 թվի ընթացքում, կանանց ուժն արտադրության մեջ աճում ե 103 տոկոսով, իսկ մսուր-

ների մահճակալների թիվը՝ միայն 35 տոկոսով: Նույն դրութիւնը նկատվում ե ե դյուղի սոցիալիստական սեկտորում: Կոլխոզների ե սովխոզների ցանքերի հրահրայական աճումն, — 5-ամյակի վերջը՝ ԽՍՀՄ բոլոր ցանքերի իննը տասերորդ մասը պետք ե հանրացված լինի — պահանջվում ե մեծաքանակ բանվորական ուժ: Մենք գիտենք, վոր այժմս ել արդեն զգացվում ե բանվորական ուժի պակասութիւն. միաժամանակ հայտնի յե, վոր գեղջկուհիներին 40—60 տոկոսը, յերեխաների պատճառով, դաշտային աշխատանքների չեն մասնակցում. անհրաժեշտ ե աշխատավոր գեղջկուհիներին մաքսիմալ կերպով մասնակից դարձնել դյուղի սոցիալիստական արտադրական կյանքին:

Այսպիսով կնոջ գերը կոլխոզների կաղմակերպման խնդրում, նրա աշխատանքի անհրաժեշտութիւնը դյուղի տնտեսական մակարդակի բարձրացման գործում, ստիպողական պահանջ են դնում համապատասխան մարմինների առաջ, կաղմակերպել մսուրներ աճն մի խոչոր սովխոզում ե կոլխոզում: Մսուրն, ազատելով կնոջը տնային աշխատանքներից, հնարավորութիւնն ե տալիս նրան մասնակցել հասարակական ե արտադրական աշխատանքներին, ու իր բաժինն ունենալ յերկրի տրնտեսական շինարարության մեջ: Գեղջկուհին պիտի պարզ գիտակցի, թե ինչ նշանակութիւնն ունի մսուրը դյուղի վերակառուցման խնդրում ե աճն կերպ աջակցի կոլխոզում մսուրի կաղմակերպման: Անշուշտ, այս հսկայական գործը (մեծ թվով մսուրների կաղմակերպումը) հնարավոր կլինի կատարել միայն բոլոր հասարակական կաղմակերպութիւնների ոժանդակութիւնով ե մասնակցութիւնով:

Ինչպես հիշված եր քիչ առաջ, մսուրի դերն ե պահ-

պանել յերեխային մոր աշխատանքի ժամերին: Բայց մտուրը վոչ միայն ազատագրում է կնոջը և հնարավորութիւն է տալիս նրան մասնակցել տղամարդի հետ հավասար՝ յերկրի վերահառուցման գործին, այլև բարձրացնում է կնոջ աշխատանքի արտադրութիւնը. մայրն իմանալով, վոր իր յերեխան լավ պայմաններէ մեջ է դանւում, ի հարկե, հանգիստ է և հետեւապես նրա աշխատանքն ավելի արդյունավետ: Մտուրներն ունենալով լայն սան-հիգիենիկ հնարավորութիւններ. առողջացման մեծ աշխատանք են տանում, տալիս են յերեխաներին կոլեկտիվ սոցիալիստական դաստիարակութիւն:

Տարիների ընթացքում փորձը ցույց է տվել, թե ինչ տեսակի մտուր է հարկավոր գեղջկուհիներին: Մտուրն սպասարկում է յերեխաներին 2 ամսականից մինչև վ չորս տարեկան հասակը: Գյուղի մտուրների մահճակալների թիվը սովորաբար լինում է միջին թիվով 30—50: Ունենալ ավելի մեծ մտուրներ, առողջապահական տեսակետից նպատակահարմար չէ. մեծ մտուրներում հեշտութեամբ տարածվում են դանազան վարակիչ հիվանդութիւններ, հաճախ մահացութեան զեպքերով. մանուկ հասակն ամենավտանգավորն է վարակիչ հիվանդութիւնների տեսակետից:

Այժմս գյուղերում մենք ունենք հետեւյալ տեսակի մտուրներ՝ 1. մշտական մտուրներ, վորոնք աշխատում են ամբողջ տարին. գոյութիւն ունեն խոշոր արտադրական նշանակութիւն ունեցող սովխոզներում և կոլխոզներում: Համարյա չեն տարբերվում քաղաքի մշտական մտուրներից:

2. Ամառային սեզոնային մտուրներ, վորոնք գործում են միայն դաշտային աշխատանքների ընթացքում:

Գյուղական մտուրների ներկայանքը, բացի այն, վոր լրիվ չի բախարարում աշխատավորութեան պահանջներին, հիմնականում ևս սխալ գրվածք ունի, վորի համար ել մտուրները հաճախ իրավացի անբավակարարութիւններ են առաջ բերում: Պատճառը նրանումն է, վոր մինչև հիմա քաղաքի փորձը, առանց փոփոխման, փոխադրվում էր գյուղը, հաշվի չառնելով գեղջկուհիների առանձնահատուկ պայմանները:

Քաղաքներում բոլոր մտուրները կազմակերպվում են մշտական տեսակի, և ունեն մի քանի նվազ ընդունելութիւն, նաեւ ինչպես է աշխատում գործարանը, վորի բանվորուհիներին սպասարկում է մտուրը: Առհասարակ մտուրը կազմակերպվում է աշխատանքի վարերում. դա հնարավորութիւն է տալիս մայրերին կրճելով կերակրել յերեխաներին աշխատանքի ընթացքումներին. միաժամանակ գտնվելով արտադրութեան մոտ՝ մտուրը գտնվում է մշտապես հասարակակ. կոնտրոլի տակ: Քաղաքներում արտադրութեան կից մտուրը, իր դերը կատարում է լրիվ: Նա խնամելով ու պահպանելով յերեխաներին, մտուրը հնարավորութիւն է տալի չկտրվել գործարանային կյանքից, հետեւապես ինքնահոսի չի յենթարկում բանվորական կանացի ուժը:

Այնպես ել պետք է լինի սովխոզներում և կոլխոզներում. ծծկեր յերեխաների մտուրը լինելու յե շարժական և գտնվելու յե աշխատանքի վայրում. մինչև իսկ մինչև վ վերջերս նման տիպի մտուրները բացակայում էին գյուղերում, դրա համար ել գեղջկուհի մայրն, ի հարկե, հնարավորութիւն չուներ կրճելով կերակրելու իր յերեխային: Մտուրում յերեխաներին կեակրում էին արհեստական միջոցով, հետեւապես յերեխաների հիվանդութիւններն անպակաս էին:

Դաշտային շարժական մսուրն այդ կողմից մեծ առավելություններ ունի. նա հնարավորություն տալով յերեխային ամառային ամիսներին մոր կաթով կերակրելու՝ պայքար է տանում նաև մահացությունների դեմ: Շարժական մսուրն աշխատող մոր հետ միատեղ շարժվում է մի դաշտից մյուսը և այդպիսով յերեխաները չեն կտրվում մայրերից, նրանք շարունակ դռնըվում են մայրերի հսկողութան տակ և նշանակված ժամերին ել կերակրում են ծծով: Անշուշտ, դյուզի մշտական մսուրները հնարավորություն չունեն տալ այդ բոլոր հարմարությունները ծծկեր յերեխաներին. դրա համար ել նրանք վաղ միայն չեն ավել կոլտողներին և սովորողներին պահանջվող բանվարական ուժը, ամ և հետ են քաշել աշխատավոր գեղջկուհիներին աշխատանքի կոլեկտիվացրած ձեւերից:

Մսուրներն ունեն լայն սան-հիդրիենիկ հնարավորություններ. մի բան, վոր չի կարող տալ յերեխաներին նույնիսկ միջակից բարձր դյուզացիական ընտանիքը: Մսուրը տալիս է յերեխաներին կոլեկտիվ դաստիարակություն, վորի համար ընտանիքներում չկան նպաստավոր պայմաններ: Այդպիսով մսուրն առողջացման հետ վերակառուցում է նաև յերեխայի կենցաղը:

Մշտական մսուրի շենքը պետք է բավարարի հետևյալ գլխավոր պահանջներին—չենքը պիտի լինի չոր, արևոտ, մեծ պատուհաններով և ողանցքներով:

Անհրաժեշտ է ունենալ շենքին կից մաքուր բակ, վորտեղ յերեխաները կարող են ազատ խաղալ, ունենալ բանջարանոց և այլն:

Արդյունաբերության կից մսուրի շենքը, ինչպես

չեղտված է, պետք է լինի դործարանին մոտ, բայց վոր դործարանի սահմաններում, վորպետեղ դործարանի մեքենաների աղմուկը չանհանդատացնի յերեխաներին:

Դաստիարակչական և առողջապահական տեսակետից մսուրի յերեխաները բաժանվում են յերկու խմբերի՝ 1) կրճի յերեխաներ— յերկու ամսից մինչև մեկ տարեկան. և 2-րդ խումբը,—ավելի մեծ յերեխաներ,— 1-ից մինչև 4 տարեկան հասակը: Ամեն մի խումբ ունենալու յե վաղ ավելի քան 15—20 յերեխա: Յեթե մսուրի յերեխաների թիվն ավելի շատ է, յերեխաները բաժանվում են 3 խմբի և այլն: Յերեխաների բաժանումն անհրաժեշտ է ըստ տարիքի, վորովհետև ամեն մի տարիքը պահանջում է տարբեր ինամք և սնունդ: Մինչեվ 6 ամիսը յերեխան կերակրվում է դուռ կրճից, ավելի մեծերը՝ բացի կրճից, ստանում են հավելյալ սնունդ և այլն: Դաստիարակչական ձեւերը նույնպես տարբեր են: Բացի այդ՝ բաժանելով յերեխաներին խմբերի, նվազեցնում ենք և վարակիչ հիվանդությունների տարածման հնարավորությունները:

Ծծկեր յերեխաների բաժանմունքն ունի հետևյալ սենյակները՝ ընդունարան, ննջարան, լողարան և կաթնախոհանոց, վորտեղ պատրաստվում են յերեխաների համար զանազան կաթի խառնուրդներ և հավելյալ սնունդ:

Մեծ յերեխաների համար բացի ննջարանից անհրաժեշտ է ևս մի քանի սենյակ՝ խաղարան, ճաշարան և հատուկ արտաքնոց:

Բացի հիշած սենյակներից, մսուրում պետք է լինի մի սենյակ ևս, հիվանդացած յերեխաներին առանձնացնելու համար, մինչեվ վոր կարելի լինի հիվանդանոց կամ տուն փոխադրել:

Նույնպէս անհրաժեշտ են խոհանոց, դրասենյակ, վաղցքատուն, պահեստ և այլն:

Անշուշտ դործարանի կից կամ վորևէ կոլխոզում դանել մի այդպիսի շենք, մսուրային բոլոր պահանջներին բավարարող, այնքան ել հեշտ չէ: Անհրաժեշտ է, վոր բոլոր դործարանների, խոշոր կոլխոզների և խոշոր սովխոզների շինարարութեան ծրագրի մեջ մտցվի հատուկ մսուրային շինարարութիւն:

Գյուղերում հաճախակի, հարմար չենք չլինելու պատճառով, ամառային մսուրները բացվում են դպրոցներում: Մի կողմից, սանիտարական տեսակետից, դպրոցական շենքերը, դյուղի պայմանների համեմատ, ամենահարմարն են, մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել, վոր դպրոցական աշխատանքներն սկսվում են աշնանը, բերքահավաքման ամենաուժեղ ժամանակը, և այդպիսով մսուրը մեքենայորեն փակվում է: Այդ բոլորն ի նկատի ունենալով, մսուրի համար պիտի վաղորոք հատկացնել ավելի հարմար շենք: Ճիշտ է, ամառվա ամիսներին յերեխաները համարյա ամբողջ ուրը պիտի լինեն բացողյա, և միայն անձրևոտ, վատ յեղանակներին անհրաժեշտ է յերեխաներին պահել սենյակներում. ավելի նպատակահարմար է ունենալ նույնպէս վրան, իսկ իրերի համար հատուկ պահեստ:

Ինչպէս շեշտված է, ամառային մսուրներ նպատակահարմար է կազմակերպել դյուղում միայն մեծ յերեխաների համար, իսկ ծծկեր յերեխաների համար անհրաժեշտ է ունենալ շարժական դաշտային մսուր, մայրերի դաշտային աշխատանքների վայրերում:

Վերջին ձեւի մսուրի համար, մեղ մոտ՝ Հայաստանում, Առօրեկոմատի կողմից, մշակված է մի նոր

տեսակի վրան: Այդ վրան-մսուրը հեշտութեամբ հնարավոր է տեղափոխել մի դաշտից մյուսը: Վրանի հատուկութիւնը նրանումն է, վոր շատ քիչ բանվորական ուժ է պահանջում վրան-մսուրը բացելու կամ հավաքելու համար: Մեծ յերեխաների համար նույնպէս կարելի յե ողտադործել վրանը, բայց վոչ շարժական, դյուղի վորևէ այդում:

Սեղոնային մսուրների աշխատանքները տեղում են 3-7 ամիս՝ նայած դաշտային աշխատանքների պահանջներին:

Մսուրի աշխատանքի ժամերը հարմարվում են մայրերի աշխատանքների հետ: Ամեն տեսակի մսուր ունի մշակված իր որվա ռեժիմը. այսինքն՝ յերեխաների կյանքը՝ սնունդը, խաղը, հանդիսաը սահմանվում է վորոչ ժամերին: Յերեխայի կանոնավոր զարգացման համար այդ անհրաժեշտ պայման է: Ստավոտյան մսուրն ընդունում է յերեխաներին մինչև մայրերի աշխատանքների սկիզբը, ժամը 5-ից: Գյուղում կրծքի յերեխաներին մայրերը տանում են իրենց հետ դաշտը և հանձնում են մսուրի աշխատակիցներին, վորոնք մինչ այդ ամեն ինչ պատրաստում են յերեխաներին ընդունելու համար: Մսուրի ջուրը կամ վարիչը հետեւում են, վոր վարակիչ հիվանդ յերեխաներ չբերեն մսուր: Միևնույն ժամանակ բոլոր մայրերն այնքան դիտակից պետք է լինեն, վոր հիվանդին իրենք մսուր չբերեն:

Այդ հարցը մեծ նշանակութիւն ունի. չպետք է մոռանալ, վոր մի հիվանդ յերեխա կարող է վարակել մսուրի բոլոր յերեխաներին. բացի այդ, հիվանդը պահանջում է հատուկ խնամք:

Մսուրների աշխատանքը կանոնավոր դասավորե-
լու համար անհրաժեշտ է, վոր բոլոր յերեխաները հա-
վաքվեն միաժամանակ, մոտավորապես 1-2 ժամվա
ընթացքում:

Ընդունված յերեխաներն անմիջապես լվացվում են
և հազոնատները փոխում: Տան շորերը պահվում են
մինչև տուն դնելն առանձին տոպրակներում: Մաղերը և
յեղունդները կտրում են, ինչքան հնարավոր է կարճ:
Լվացվելուց հետո յերեխաները (նայած թե վոր ժամին
են բերվել) ջնում են մինչև ժամի 8-ը: Յերեխաները կե-
րակիցվում են վորոշ ժամերին, նայած նրանց հասակին,
մինչև 5-6 ամսեկանը՝ յերք, յերեք և կես ժամ 1 ան-
գամ, միայն կրծքով, ավելի մեծ հասակում 4 ժամը
մեկ: Անշուշտ, հաճախ են դեպքերը, յերբ անհրաժեշտ
է լինում կերակրել յերեխային մինչև 5 ամիսը խառը
կամ արհեստական կերակրով, բայց այդպիսի դեպքերում
անհրաժեշտ է դիմել բժշկին և միայն բժշկի ցույցմունք
ներով յերեխային տալ այս կամ այն անունը: Կրծքով
կերակրելու համար մայրերը, նշանակված ժամերին,
դալիս են մսուրը. այլ անունը պատրաստում են մսու-
րում՝ համապատասխան յերեխաների հասակի:

Ուտելուց հետո փոքրիկներին նորից ջնեցնում են,
հնարավորության սահմաններում բացողչա: Ավելի մեծ
յերեխաները կաղմակերպված խաղում են, կամ դնում
են դաստիարակչուհու դեկավարությամբ դրոսներու:

Մինչև 2-րդ նախաճաշը, յերեխաները լողաց-
վում են. մեծերի համար «դուշ» և սարքվում, այսինքն՝
յերեխայի վրա կանոնաձ դրությամբ ջուր է լեցվում:

Ամառը յերեխաներին լավ է լողացնել արևով պա-
քացրած ջրով:

Ճաշից հետո բոլոր յերեխաները հանգստանում են:
Դա անհրաժեշտ է մսուրի բոլոր յերեխաների համար
անխտիր: Հանգստանալուց հետո յերեխաները նույն-
պես խաղում են, զբաղվում են դաստիարակչական դու-
նազան աշխատանքներով, ժամի 4-ին ճաշում են յերի-
բորդ անգամ: Յերկրորդ ճաշից անմիջապես հետո մայ-
րերը, աշխատանքը վերջացնելով՝ յերեխաներին տուն
են տանում, բայց դուրս դուրս դաշտային աշխատանքը
տևում է մինչև որվա վերջը և այդ պատճառով ել մը-
սուրն աշխատում է ավելի յերկար:

Վորոշ ժամերին, փոքր յերեխաներին մաքրության
են վարժեցնում: Յեթե այդ աշխատանքը կատարվում է
սխտեմատիկորեն, 8—10 ամսական յերեխայի նկատ-
մամբ սաացվում են դրական արդյունքներ:

Մաքուր ուղը, արեվը և ջուրը մեծ դեր են խաղում
յերեխաների կանոնավոր դարդացման հարցում: Քա-
ղաքներում, շնորհիվ մեր կոնսուլտացիաների տարած
աշխատանքների, մայրերը բավական ծանոթ են վերո-
հիշյալ բնական միջոցների ուղտազորման հետ. բայց
դուրս դուրս, ուր չնայած ընդհանուր պայմաններն ավե-
լի յեն նպաստավոր այդ տեսակետից, դժբախտարար
բնակչութունը չդիտե ողտոյել բնության այդ բարիքնե-
րից ինչպես հարկն է. մեր մսուրները մեծ անելիքներ
ունեն այդ ասպարիզում, պետք է իրենց աշխատանքի
ընթացքում կենդանի որինակներով սովորեցնեն մայրե-
րին յերեխայի խնամքի հիմնական որինքները, ասպարու-
ցեն, վոր խնամքի ձեվերը վճռական նշանակութուն ու-
նեն յերեխայի առողջ լինելու հարցում:

Ջրի ոգտագործումը:—

Մինչեւ մի տարեկան հասակը յերեխային անհրա-
ժեշտ է լողացնել ամեն օր, ամառը շոգ յեղանակներին
խորհուրդ է տրվում լողացնել դուրսը գոլ ջրով: Բացի
այդ, քմեն կեղտոտվելուց հետո, անհրաժեշտ է յե-
րեխայի տակը լվանալ:

Յերեխայի յերեսը լվացվում է առանձին, անպայ-
ման յեռացրած ջրով:

Մեծերին պետք է լողացնել ամենապակասը շմբա-
ժը՝ մեկ անգամ, իսկ ամառը՝ նույնիսկ ամեն օր: Յերե-
խաների ձեռքերը պետք է լվացվեն ամեն անգամ կերակ-
րելուց առաջ և հետո. իսկ յերեկոները լվացվում են և
վոտները:

Առհասարակ յերեխաները շատ են սիրում ջուրը.
շատ ջիչ է պատահում, վոր յերեխան խոռոսալի ջրից.
յերեխայի վախը ցույց է տալիս, վոր մայրն անկանոն
է լողացնում նրան, ջուրը կամ շատ տաք է լինում, կամ
շատ սառը, կամ գլուխը սապոնով լվանալիս՝ սապոնն
աչքերն է լցնում և այլն:

Ողի ոգտագործումը:

Սենյակները պետք է աղալիովին օրեկան
մի քանի անգամ, բաց անելով ողանցքները և
պատուհանները, մինչև անգամ յերեխաների սենյա-
կում յեղած ժամանակ: Բայց ինչքան էլ սենյակի ողը
մաքուր լինի, չի կարող փոխարինել դրսի մաքուր ողին:
Փոքր հասակից, ամառը, ծնվելուց 7-10 օր հետո, իսկ
նեոնը՝ 2-3 շաբաթից հետո, յերեխային պետք է դուրս
քերել մաքուր ող չնչելու: Իհարկէ յերեխային այնպես
փաթաթել, վոր նա չմրսի, բայց աչքերը և ջրի ան-

պայման բաց պետք է մեան, հակառակ դեպքում ողը
յերեխային վոչ մի ոգուտ չի տա:

Սովորեցնելու համար առաջի օրերը, յերեխային
յերկար ժամանակ դուրսը չեն պահում, ընդամենը 10-
20 րոպե: Աստիճանաբար ժամանակը յերկարացվում է.
օրն, ընդմիջումներով յերեխան դուրսն է մնում: Մա-
քուր ողում յերեխաների և քունն է լինում ավելի հան-
դիստ և ախորժակն է ուժեղանում:

Ռուսաստանում, վորտեղ ձմեռվա ցրտերն ավելի
ուժեղ են, քան թե մեղ մոտ, բոլոր յերեխաներն ամեն
օր դուրս են բերվում զրոսնելու, իսկ մսուրներում մին-
չեւ անգամ քնում են դուրսը, համապատասխան շորեր
հազցրած:

Բացի դրանից, յերեխայի առողջացման խնդրում
լավական խոշոր նշանակութուն ունեն այսպես կոչ-
ված ողային վաննաները: Մենք դիտենք, վոր թարմ ո-
ղի անսովոր յերեխաներն ավելի հեշտությամբ են մըր-
օում, հիվանդանում հարբուխով և գրիպով: Ողային
վաննաները, այսինքն՝ յերեխային թարմ ողում վորոշ
ժամանակ մերկացրած պահելը, առողջացնում է յերե-
խային, սովորեցնում է ավելի լավ դիմադրել զանազան
վնասակար ողային աղբեցություններին: Ողային վան-
նաներն աղբում են տարբեր, նայած ողի ջերմության:
Բոլոր տեսակի վաննաները նշանակվում են բժշկի
ցուցմունքներով:

Արեվի ոգտագործումը:—

Բոլորին էլ հայտնի յէ, վոր բնության մեջ սուանց
արեվի վոչինչ չի աճում: Մարդու կանոնավոր աճման
և դարգացման համար նույնպես արեվն անհրաժեշտ է:

Միաժամանակ չարտը և մոռանալ, վոր արեվի ճառագայթները աղղեցուցեցունն այնքան ուժեղ և, վոր անկանոն ուղաղործված դեպքում կարող և մինչև անդամ վնաս պատճառել: Արեվի վաննաները նշանակութունը լայն մասնաներին հայտնի յե և շատ շատերն են ինքնահամ արեվի վաննա ընդունում. անշուշա դա սխալ և, կարելի դեպքում անհրաժեշտ և դիմել բժշկի խորհրդին: Իսկ մանուկները նկատմամբ, վաննաներ նշանակվում են հատուկ դրուշությամբ, հաշիլի առնելով յերեխայի կազմվածքը, ուժերը և այլն: Ի նկատի ունենալով, վոր արեվի աղղեցուցեցունն ուժեղ և, անհրաժեշտ և յերեխայի մաշկն աստիճանաբար սովորեցնել արեվի ճառագայթներին: Դրա համար առաջի որերը յերեխան միայն մի քանի րոպե յե մնում արեվի տակ՝ 2-5 րոպե. մաշկը սկզբում վարդի գույն և ստանում, իսկ մի քանի որից հետո շաղանակագույն և դառնում: Այնուհետև յերեխաներին թույլատրվում և յերկար ժամանակ արեվի տակ մնալ և խաղալ. պետք և սակայն հետևել, վոր յերեխայի դրուշան անպայման ծածկած լինի սպիտակ քաթանե դիպարկով կամ թեթեվ սպիտակ շորով:

Մսուրի կարելիոր աշխատանքներից մեկն էլ յերեխաների սնունդի կանոնավոր կազմակերպումն և. հարկավոր և մի կողմից յերեխայի առողջութունը պահպանել, իսկ մյուս կողմից մայրերին ծանոթացնել կանոնավոր կերակրելու ձևին:

Ինչպես չեղաված և, յերեխաները կերակրվում են ժամերով. ծծկեր յերեխաները 3-3 և 1/2 ժամ մեկ անգամ, 5 ամսական յերեխային, բացի կրծքից, տալիս են որը մեկ անգամ հավելյալ սնունդ՝ «մանույա կաշա»

կամ բանջարեղենի «պյուրե»: Այդ ժամանակից յերեխան կերակրվում և 4 ժամ մեկ անգամ: Մինչև 9-10 ամիսը յերեխային վարժեցնում են՝ մսաջրի, բանջարեղենի սուպի, մաքուր կաթի, սուխարու, ժրգից պատրաստած կիսելի կամ կոմպոտի և մինչև անգամ թարմ մրգի (մրգի հյութը թույլատրվում և տալ նույնիսկ 4-5 ամսականից): Ամեն տեսակի սնունդի վարժեցրած յերեխային 11-12 ամսական հասակում այլևս կարիք չկա կրծքով կերակրել. իհարկե յերեխայի կազմվածքն այս հասակում դեռ պահանջում և հատուկ ու հարմար սնունդ:

Ընդհանրապես յերեխային անհրաժեշտ և տալ պարզ ու հասարակ պատրաստած սնունդ, բայց միևնույն ժամանակ կերակուրները պետք և լինեն բազմազան, դյուրամարս և անդարար: Դիտալորապես պետք և դործածվեն դանդաղ բանջարեղեններ, միրգ, կաթ, և բոլոր կաթնամթերքները: Մեծած միսը դործածվում և մեկ, մեկ ու կես տարեկանից. միևնույն ժամանակ թույլատրվում և դործածել և ձվի դեղնուցը, իսկ մոտ 2 տարեկան հասակում կարելի յե տալ և սպիտակուցը:

Յերեխայի դաստիարակութունը պետք և սկսվի կյանքի ոռաջին ամիսներից. միայն դաստիարակության ճիշտ դրվածքով կարելի յե յերեխայից հասարակության համար պիտանի անգամ պատրաստել: Անշուշա այդ հարցում մսուրը չափազանց պատասխանատու դեր ունի, մանավանդ վաղ մանկության շրջանում: Դաստիարակության մեթոդները և ձևերն այս հասակի վերաբերյալ դիտալորան կողմից դեռ վերջնականապես չհաղիված չեն:



14917-57

Պետք է շեշտել, վոր մտուրի աշխատանքներն այն դեպքում դրական հետեւմանք կունենան, յերբ մայրերը տներում նույն մոտեցում ունենան յերեխաների դաստիարակութեան խնդրում, ինչպիսին տարվում է մտուրում :

Այդ տեսակետից անհրաժեշտ է, վոր մտուրի աշխատակիցները վորոշ կուլտ-կրթական աշխատանք տանեն ծնողների մեջ, մայրերի հերթափոխութեան միջոցով ծանոթացնեն դաստիարակչական աշխատանքներին սկզբունքներին և այլն :

Յերեխաները մտուրում բաժանվում են խմբակներէ, ըստ հասակի, 15-ական յերեխա տմեն մի խմբակում : Առաջին խմբակի յերեխաների նկատմամբ դաստիարակչական աշխատանքը կայանում է դիւստիորակեա նրանում, վոր յերեխային վարժեցնեն կերակրվել ժամերով, կերակուրն ընդունել դժպով և բաժակից, և վոչ թե միայն ծծելով : Թաց տակաշորներում չթողնել և այնպես սովորեցնել, վոր յերեխան զգա չոր և թաց շորերի տարբերութեանը և այդ ձևով նրան մաքրութեան վարժեցնել :

Չանաղան դաստիարակչական և առողջապահական միջոցների ողնութեամբ հետեւում են, վոր յերեխայի մկանները կանոնավոր զարդանան, վոր յերեխան ժամանակին կարողանա նստել, չոչ անել, ման դալ և այլն :

Յերեխային ժամանակին խոսել սովորեցնելու համար նույնպես անհրաժեշտ է կանոնավոր դաստիարակչական մտեցում : Հաճախ նկատվում է, վոր յերեխային շրջապատող մեծերն աշխատում են հետը խոսել յերեխայի լեզվով, կարծելով, վոր այդպես յերեխան նրանց արվելի լսով կհասկանա : Իս սխալ է և վնասում է յերե-

խային . չպետք է մոռանալ, վոր առաջին շրջանում յերեխան դեռ չի կարող խոսքերն ուղիղ արտասանել, իսկ հետո, լսելով շարունակ իր շուրջը սխալ լեզու՝ յերեխան այնպես էլ սովորում է և ապագայում շատ դժվար է լինում ուղղել յերեխայի լեզուն :

Մեծ յերեխաները, իրենց ուժերի չափով մասնակցում են դանաղան աշխատանքների, հերթափոխութեան կարգով ճաշ են բաժանում, սեղան են հավաքում, սըրբում են և մի շարք ուրիշ մանր աշխատանք են կատարում : Սովորեցնում են առանց մեծի ողնութեան իրենց շորերը հագնել և հանել, բխցնել, աստամները խոզանակով և փոշիով մաքրել և այլն :

Մեծերի վերաբերմունքը հանդեպ յերեխաների պետք է լինի աշխուժ, հանգիստ և սիրալիք : Նման վերաբերմունքը յերեխային վարժեցնում է իր ընկերների հետ նույն վերաբերմունքը ցույց տալ :

Յերեխաների կուլիտերը, վոր սովորական են խոզանիքների շուրջը, վերանում են, յերեխաները սովորում են կուլիտիվ աշխատանքի, խողի և այլն :

Այդ բոլոր ունակութեանները յերեխան վոչ թե միանգամից է ըմբռնում, այլ յերկարատեմ և սիստեմատիկ աշխատանքի ընթացքում : Բայց ստացված արդյունքներն այնքան դժար չեն, վոր ամեն մի մայր պետք է մտուրի դաստիարակչական աշխատանքներին ընդհատալի :

Պարզ է, վոր մտուրի աշխատանքը միայն այն ժամանակ կլինի հաջող, յերբ կահավորումը բավարարի բոլոր դաստիարակչական և առողջապահական պահանջներին : Ախոռները և սեղանները պետք է լինեն թեթեւ և յերեխաների հասակի համեմատ, վորպեսզի յերեխա-

ները կարողանան տեղափոխել մի սենյակից մյուսը, վիագարանները և խաղալիքների պահարանները պիտի լինեն ցածր և աշխարհ: Վերջինս անհրաժեշտ է այն տեսակետից, վոր յերեխաներն առանց ողնուլթյան կարողանան խաղալիքներից ուղտվել: Խաղալիքները պահարաններից հանելով և հետ դասավորելով՝ յերեխաները սովորում են ինքնասպասարկման և վորոշ չափով կարգ ու կանոնի:

Փոքր յերեխաների համար դրվում է «մանյեթ», վորտեղ նրանք նստելու և կանգնելու համար անհրաժեշտ միջանները դարձացնում են:

Ամեն մի յերեխայի համար առանձին ճաշի և թեյի սեղաններ պետք է լինեն:

Յերեխայի կանոնավոր հազուստը մսուրում, մեծ ցուցադրական նշանակութուն է ստանում. մայրերի մեծամասնութունն անկանոն են հազցնում յերեխաներին: Կրճճի յերեխայի համար անհրաժեշտ են տակաչորներ և, այսպես կոչված «բասպաչոնկա». սա մի շտպիկ է առաջից բացված, վորը հնարավորութուն է տալիս յերեխային հազցնել և հանել առանց տեղից բարձրացնելու: Չմեղը հազցնում են մի շտպիկ ևս, բուժադիէյից կամ դործված:

Վերմակը պետք է լինի բայկից: Տաղության վարձեցրած յերեխայի համար, բացի շտպիկից, պետք է ունենալ լիվչիկ և վարտիկ: Վերելից հազցնում են կարճ դերյա, կամ կոմբինացիա այնպես, վոր չխանգարի յերեխային քայլել: Բոլոր հազուստեղները պետք և կարվեն վիացվող կտորից:

Յերկու յերեք տարեկան յերեխային սամուր հազցրելում են միայն կոմբինացիա, կամ տրուսիկներ, ձմեռ.

վա համար՝ բացի տաք շորերից, անհրաժեշտ են հատուկ տաք տոպրակներ, դուրսը ջնելու համար:

1. Անշուշտ ամեն մի յերեխան պետք է ունենա անհատական մահճակալ և անկողին, սրբիչ և աշխարհներ:

2. Յերեխաներին սովորեցնում են ճանաչել իրենց իրերը, որինակ՝ սրբիչ, ստամների խողանակ, մահճակալ և այլն: Այդ նպատակի համար ամեն մի յերեխա ունի իր նկարը, վորը կախվում է մահճակալի, սրբիչի վրա և այլն. նույն նկարը պատին և կախվում, յերեք յերեխան հերթապահ է լինում. այսպիսով, յերեխան դեռ ստուերը չիմացած՝ կարողանում է կարգալ իր անունը:

3. Պարբերաբար զեկուցումների միջոցով կապ է պահպանվում պատգամավորական ժողովի հետ, վորը շեֆութուն է վերցնում մսուրի վրա և հասարակական կարգով պատգամավորուհիներին կցում է մսուրին կոնկրետ աշխատանք տանելու նպատակով:

Նույն ձեով կապ են պահպանում և պիտներական կազմակերպութունների հետ. պիտներները մեծ դեր ունեն մսուրի աշխատանքներում: Հաճախ դյուղի մսուրը չունի պահանջված թվով համապատասխան պատրաստված կարգեր. պիտներները հաճախելով մսուրը՝ զբաղեցնում են յերեխաներին, նոր խաղեր են սովորեցնում իրենց ձեռքով պատրաստված խաղալիքներով խաղացնում են յերեխաներին և այսպիսով, իհարկե, վորոշ ողնութուն են հասցնում դյուղի մսուրին:

Մի քանի անգամ արդեն շեշտել ենք, վոր մսուրն իր աշխատանքների ընթացքում պետք է կապ պահպանի աշխատավորուհիների հետ: Իրա անհրաժեշտության վրա մենք հատուկ շեշտած ենք:

Այդ կապը պահպանում է հետեւյալ միջոցներով՝

1. Վորոշ ցուցակով մսուր հաճախող յերեխաների մայրերը, հերթականութեան կարգով, աշխատում են մսուրում, ողնելով քույրերին և դաստիարակչուհիներին:

Գրանով, միկոզմից հասարակական կոնտրոլ է կատարվում, մյուս կողմից՝ մայրերը գործնականապես ծանոթանում են յերեխայի սննդի և խնամքի կանոններին:

2. Միտումատիկորեն նշանակվում են ծնողների ընդհանուր ժողովներ, վորտեղ զեկուցումներ են լինում առողջապահական և մանկավարժական հարցերի շուրջը. Ինչպես և լինում են հաշվետու զեկուցումներ և քննվում են մսուրի ներքին կյանքի վերաբերյալ դանազան խնդիրներ:

4. Մսուրի աշխատակիցները հաճախում են տները, ուր հետազոտում են յերեխայի կյանքի պայմանները, խորհուրդ են տալիս մորը բարելավել յերեխայի խնամքն ունեցած նյութական հնարավորութիւնների սահմաններում, իսկ մյուս կողմից՝ հսկում են, թե յուրացրե՞լ է արդյոք մայրը յերեխայի կանոնավոր սննդի և խնամքի օրենքները:

Այս ձևով տարած գործը մոտեցնում է և կապում մայրերին մսուրի հետ. աշխատանքը դառնում է արդյունավետ և մեծ բավարարութիւն է տալիս թե՛ ծնողներին և թե՛ աշխատակիցներին:

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ՊԱՏՄԱՍՏԵՆՈՒ ԶԵՎԸ

Մտննայա կաշա. —

Մաքուր լվացած փոքր կաթսայի մեջ լից մի բաժակ ջուր և դիր կրակին. յեռալուց հետո ավելացրու 2 թեյի զբալ՝ մաննայա կրուպա, և խառնիր շարունակ, վոր կրուպան դուռդ-գուռդ չդառնա, յեփիր մինչև վոր ջրի մնա:

Ավելացրու կես բաժակ հում կաթ, դդալի ծայրով աղ, մի թեյի դդալ շաքարավաղ և նորից մեկ անգամ յեռացրու:

Նույն կաշան կարելի յե մսի ջրով պատրաստել:

8-12 ամսեկան յերեխայի համար վերցնել յերեք թեյի դդալ մաննի կրուպա:

Գետնախնձորի պյուրե. —

Մաքուր լվանալ 3-4 հատ գետնախնձոր, լցնել վրան սոգարած յեռացող ջուր, այնպես վոր ջուրը գետնախնձորին ծածկի. յեփել կաթսան կալտարիչով ծածկած: Յեփելուց ջուրը թափել, գետնախնձորը չորացնել, մաքրել և մինչև սառելը մաղով անցկացնել, ապա ավելացնել կես բաժակ տաք կաթ, կես թեյի դդալ կարագ, գնել կաթսան ուրիշ մեծ կաթսայի մեջ, տաք ջրով լցրած և այնքան հարել պյուրեն, վոր սպիտակի:

Կիսել. —

Կիսելը պատրաստում են դանազան թարմ կամ չորացրած մրգից (չեքնիզա, խնձոր, բալ, մուշ, մորի, հոն և այլն):

Մի բաժնի համար վերցնում են յերկու ճաշի դդալ թարմ կամ յերկու թեյի դդալ չորացրած միրգ:

Միջոց ընտրել, լվանալ, դաշտով արտրել և կամ
մաղով կամ մառլայով քամել (հյուսիս մեջ հետագայում
բաց անել գետնախնձորի ալյուրը), մրդի մնացորդի վրա
մեկ բաժուկ սառը ջուր ավելացնել և դնել կրակին: Մեկ
անգամ ևս յեռալուց հետո, յերկու յերեք թեյի դալ
չաքարավազ ավելացնել, նայած մրդի քաղցրութեան,
թողնել, վոր մեկ անգամ ևս յեռա. նույն ժամանակը
սառը հյուսիս մեջ բացանել մեկ լիքը թեյի դալ դեռ-
նախնձորի ալյուր, ավելացնել յեռացող սիրտին
խտոնելով. մեկ անգամ ևս թողնել յեռալ և անմիջա-
պես դատարկել ամբողջով (տե՛ս կաթասի մեջ
չթողնել):



2069

ԳՐԵԸ 15 Կ.



Д-р СОФИЯ АРУТЮНЯН
ЯСЛИ и ЖЕНСКИЙ ТРУД
Издание НКЗ ССР Армении

1 * 9 * 3 * 2